

կը ցաւինք ըսելու որ այս մեծ հանճարը՝ ազգիս մեծ մասին անծանօթ մնացած է, և ասոր միակ պատճառն է իր տաղանդաւոր գրութեանց ուսերէն ըլլալն. զոր ձեռնհաս ուսանչայերն չթարգմանելով, մեզազրելի կը մնան, գիտական դասակարգի առջեւ Ռուսահայք այժմ միայն վիպասանութեամբ կ'ուզեն օգտակար ըլլալ. թերի է այս գործունէութիւնը:

ՆԱԶԱՐ ԳՈՐՈՅԵԱՆՑ

1842-1901

ՊՐԱԿԱՆ մեծ կորուսանքն մին ալ համարելու է Գորոյեանցի մահը, որ անցեալ տարւոյ դեկտեմբեր 27ին հանդիպեցաւ, սուգի մէջ ձգելով իր կնոջ և զաւակներու հետ թարրիզու հայերը, ուր երկար տառնէ ի վեր հաստատուած էր: Կրթութիւնը առած էր նա զլիսաւորապէս Տանկաստանի մէջ, Մալթա կղզիի մէջ կենալով սորված էր անգղիերէնը. հմուտ էր նաեւ զաղղիերէն, պարսկերէն և մայրենի լեզուին, և տեղեակ՝ պատմութեան և հնագիտութեան:

Կ. Պոլսոյ և գաւառներու մէջ վարած հեռագրատան պաշտօնին համար արժանացած էր չորրորդ կարգի Մէճիտիէ պատուանշանին. յետոյ թողլով այդ ծառայութիւնը հեռամուտ եղած էր վաճառականութեան, և իր բնական ուշիմութեամբ, ճարպկութեամբ և խնայողութեամբ կարող եղած էր բաց ի բարեկեցիկ վիճակէ, բաւական գումար մը (50000 փութի) կտակել իր բնականեաց, Արամեան դպրոցին ալ 2%, տոկոս յատկացընելով:

Գորոյեանց քանի մ'անգամ ճանապարհորդած էր Եւրոպա, ի մասնաւորի Անգլիա, յատուկ թղթակից էր Պարսկաստանի մէջ «Տէյլի Նիւզ» անգղիական թերթին, որ լաւ կը գնահատէր և կը վարձատրէր անոր գրուածները: Քսան տարի վարեց Ղալա թաղի երկսեռ դպրոցներու հոգաբարձութեան նախա-

գահութիւնը. ինքը հիմնեց Խնայողական ընկերութիւնը և Լսարանական ընկերութեան հիմնադիր անդամներէն մէկն էր:

Սակայն Գորոյեանց իրբն զբաղանք անձ աւելի մեծ նշանակութիւն ունի. 1880ին ի Պոլիս հրատարակած «Դաստիարակութիւն Հայոց» գրքով ցոյց տուաւ կրթական յառաջագիմութեան պէտքը և միջոցները. մասնանիշ ընելով եւրոպական նշանաւոր հեղինակներու կարծիքները, ընդհանուր դաստիարակութեան վրայ խօսելով և ուսուցիչներու, ուսանողաց, դասական գրքերու,



ՆԱԶԱՐ ԳՈՐՈՅԵԱՆՑ

դպրոցական շէնքերու, բարոյականութեան, մարմնամարզութեան, աղջկանց կրթութեան և այլ խնդրոց վրայ ճանդէն վերջ, զանց չընէր քննադատել Ռուսմական խորհրդի գործունէութիւնը և ծրագիր առաւ «Ազգային ճեմարանի» մը:

Ուրիշ մէկ գնահատելի աշխատասիրութիւնն ալ է «Պարսկահայոց պատմութիւնը», արդիւնք մանրակրկիտ ուսումնասիրութեան, որ 1901ին իլվրլիբան մրցանակաբաշխութեան յանձնաժողովէն 30 ոսկի մրցանակով վարձատրուեցաւ: Մեզի արուած ծա-

նօթութիւններէն կը համառօտենք հոս անոր բովանդակութիւնը:

Կը սկսի Յուդայով մը Ծն երեւելի Անգլիացի, Ֆրանսացի, Պարսիկ և Արարացի հեղինակաց, որոնցմէ տեղեկութիւններ առած կամ վկայութիւններ բերած է: Կը բաժնէ տասը գլուխներու: Ա. կը գծէ Պարսկաստանի սահմանները, և երկրին հետ ազգաց, կրօնից և լեզուաց վրայ տեղեկութիւն կու տայ: Բ. Արարացականի անունը, անցնալը և ներկայն կը պատմէ: Գ. Դավթիթի ընդհանուր նկարագրին և պատմութեան մէջ, Հայերու այժմեան կացութիւնը: Դ. Հայաբնակ գիւղեր և գետտներ: Մարասն, Խոյ, Ռարմա, Սոփոքարաղ, և այլն, անոնց մէջ գտնուած եկեղեցիք և արձանադրութիւններ: Ե. Խափահան, Հայոց այլ և այլ գաղթութիւններ: Զ. և զխաւորապէս Եւրասիոյ պատմութիւնը, Հին և Նոր Զուլա նկարագրուած: Զ. Թէէրան և անոր շրջակայք և Հայոց հոն հաստատուիլը: Է. Համասան, անոր հնութիւնք և հայաբնակ գիւղեր: Ը. Խօրասան Նահանգը, Սպաստան և Վրկանայ երկիրը: Սմբատ Բագրատունույ կառավարութիւնը, Հայերն, հայ և նեստորական եկեղեցիներու հետքերը: Թ. Հնդկաստանի Հայերը և իրենց Անգլիացոց մատուցած ծառայութիւնները: Ժ. Աֆղանիստանի և Քաշկարի Հայերը: Յատուկ անունաց ցանկով մը կը փակէ իր երկասիրութիւնը որ պատմական, տեղեկագրական և իրնակագրական տեղեկութիւններով լի է Պարսկաստանի Հայերու վրայ, ամենահին ժամանակներէ մինչեւ մեր օրերը:

Յիշելը վերջապէս պարսկերէն—հայերէն—ֆրանսերէն բառարան մ'ալ զոր նշնպէս ձեռագիր թողած է Գորոյեանց:

Հ. Գ. ԶՐԱՔԵԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

ԶԱՅԻՆ և կամ ուրիշ մեծ և սրբազան տօներ ամէն տարի հանդիսաւոր կատարուած ժամանակ՝ ամէն ազգասէր մտաց մէջ անշուշտ հին քաղցր և ցանկալի յուշք և յիշատակք կ'արթնան: Եւ հիմա կարծես թէ կը զգաս, կ'իմանաս թէ բան մը, ծէս մը, արարողութիւն մը պակաս է այլ տօնախումբ հանդէսներէն, և չէ այն Զատիկն կամ տօնն՝ զոր մեր նախնիք կը կատարէին: Իսկ եթէ քրիստոնեայ Զատիկն և տօններէն ալ զէպի վեր սլանանք մեր ազգին հեթանոսական խաւարին մէջ թարթափելու համար, կը տեսնենք Համախալսարնական տօներ, Աշխարհաժողով հանդէսներ, Նասասարգի տօներ: Բաց զրեւանպայ քարձրաւանդակներու վրայ խոնքերն այրաբառեան աստուածանոյզ գունդն, ազգային աշխարհապահ զինուորք, հոն մըլցանք կտրճաց, խաղք և վայելք հասարակաց, զորս երեք հազար տարւոյ չափ կատարեցին մեր նախահարք, փողք և պարք, երգք թնկացին Բագրեւանդայ բլուրներու վրայ մինչեւ որ անոնց տակ ծածկուեցան աներեւոյթ եղան մեր հարք:

Բայց «երբ Հայկայ և Վահագնի օրերուն խորհրդակաւասար քրմապետաց տեղ փոխանակեցին իաշապակի քահանայապետք, մահնաց վրայ եկեղեցիներ կանգնեցին» (այլ) անոնց չորս պին և զուրսը նոյնպէս մնաց. բնութիւն իւր կերպարանքը չփոխեց, ազնիւ իր հանդէսները չփոխեց. այլ տօները սրբեց, և փոխանակ գից՝ նուրբեց ճշմարտին Աստուծոյ և նահատակաց նորա՝: Եւ այս նշխարեալ սրբազան այլ և սրբազնացած մնացորդներէն մին էր և Մատաղն, որոյ վրայ քանի մը խօսք բուխ տանք և բռնեք հոս:

Մատաղ, զոր ոմանք կը ստուգաբանեն, աղ մատուցանելով օրհնուած նուէր, կրնայ նաեւ հառարակ նշանակութեամբ մատուցել կենդանի նշանակել, կամ առջինեկ, ինչ-